

Գոլմարի հարցում Ուղեցույց



Գումարի հարցում

Acba digital-ի օգտատերերը այսուհետ հնարավորություն կունենան հավելվածից գումարի հարցում ուղարկել ցանկալի անձին /անձանց կամ կատարված ծախսը բաժանել մի քանի անձանց միջև:

!!!

Գումարի ստացման հայտ հնարավոր է ուղարկել ինչպես acba digital օգտատիրոջ, այնպես էլ հավելվածի օգտատեր չհանդիսացող անձի, ով կարող է լինել նաև այլ բանկի քարտապան:

!!!

!!!

Ծառայության միջոցով հնարավոր է գումարի հարցում (գումարի խնդրանք) ուղարկել այն անձին ումից ակնկալվում է գումարի փոխանցում ստանալ:

!!!

!!!

Ծառայության միջոցով հնարավոր է կատարված ծախսը բաժանել ցանկալի մասնակիցների միջև և բոլորից գումարը ետ ստանալ մեկ եղանակով:

!!!

Գումարի հարցում



Գումարի հարցում ձևավորելու համար անհրաժեշտ է հավելվածի առաջին էջից ընտրել acba share կոճակը:

1




Acba share բաժնից անհրաժեշտ է ընտրել «Գումարի հարցում» կոճակը:

2

Նոր բացվող էջում առկա է 2 պատուհան՝ **Ուղարկված** և **Ստացված**: Նոր հարցում ստեղծելու համար անհրաժեշտ է Ուղարկված բաժնից ընտրել «+ Նոր հարցում» կոճակը:

3




«+ Նոր հարցում» կոճակը սեղմելուց հետո կբացվի նոր էջ, որտեղ անհրաժեշտ է մուտքագրել համապատասխան դաշտերը, իսկ գումարը փոխանցողներին ընտրել «+ Ավելացնել Փոխանցողին» կոճակը:

4





Բացված էջում փոխանցողին հնարավոր է որոնել հեռախոսահամար/էլ. հասցե մուտքագրելով կամ դրանք ընտրելով հեռախոսագրքից/acba contacts-ից:

5



6

Որոնման արդյունքները կցուցադրվեն ոչ լիարժեք ֆորմատով: Համոզվելուց հետո որ տվյալները ճիշտ են, անհրաժեշտ է սեղմել «Հաստատել»:
Եթե որոնման արդյունքում չի գտնվում acba digital օգտատեր, ապա համակարգն առաջարկում է հարցումն ուղարկել հղման տեսքով: «Այո» սեղմելու դեպքում տվյալները կավելանան փոխանցողների ցանկում:



Հաստատել սեղմելուց հետո Փոխանցողը կհայտնվի հարցման ցանկում, իսկ գումարը հավասարապես կբաշխվի ընտրված բոլոր մասնակիցների միջև: Մասնատված գումարը հնարավոր է խմբագրել, յուրաքանչյուր Փոխանցողի համար մուտքագրելով անհրաժեշտ գումարի չափը:

7

Եթե հարցման մեջ ներառվել են նաև ոչ acba digital օգտատերեր, ապա գործարքի հաստատումից հետո համակարգը կցուցադրի գեներացված հղում, որը հնարավոր է ուղարկել ցանկալի անձին և փոխանցումը ստանալ վայրկյանների ընթացքում: Հղումը հնարավոր է օգտագործել միայն մեկ անգամ:

!!!

Գումարի փոխանցում պատասխան հայտով



Ստացած գումարի հարցման պատասխան գումար փոխանցելու համար անհրաժեշտ է հավելվածի առաջին էջից ընտրել acba share կոճակը:

1




Acba share բաժնից անհրաժեշտ է ընտրել «Գումարի հարցում» կոճակը:

2

Նոր բացվող էջում առկա է 2 պատուհան՝ **Ուղարկված** և **Ստացված**: Փոխանցում կատարելու համար անհրաժեշտ է մուտք գործել ստացված բաժին և ընտրել Ընթացիկ կարգավիճակով այն հայտը, որի դիմաց կատարվելու է փոխանցումը:

3



Բացված էջում արդեն լրացված կլինեն փոխանցման անհրաժեշտ դաշտերը: Կպահանջվի միայն ընտրել էլքագրվող հաշվեհամարը և սեղմել «Փոխանցել»:
Փոխանցումը կկատարվի ակնթարթորեն:

4